ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՊԵՏ

Հ Ր Ա Մ Ա Ն

2013 թվականի օգոստոսի 26-ի N 485 - Ա

ք. Երևան

ՀՀ ԳՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 42-Ա, 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 176-Ա ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 468-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի «Իրանի Իսլամական Հանրապետության Մազանդարան վարչական տարածքից կենդանի թռչնի, բոլոր տեսակի թռչնամթերքի, ապրանքային և ինկուբացիոն ձվի, մսոսկրային ալյուրի, կերերի, լրացակերերի, պոլիմերային և ստվարաթղթե պալարային տուփերի և միջադիրների ներմուծումը Հայաստանի Հանրապետություն արգելելու մասին» թիվ 42-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) Հրամանի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ «ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) Հրամանի 1-ին կետը «լրացակերերի» բառից հետո լրացնել «բացառությամբ սինթետիկ և քիմիական նյութեր պարունակող լրացակերերի», իսկ «բոլոր տեսակի թռչնամթերքի» բառերից հետո լրացնել «հումքի (փետուր, աղվամազ)» բառերով:

2. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի ապրիլի 16-ի «Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք կենդանի թռչնի, բոլոր տեսակի թռչնամթերքի, ապրանքային և ինկուբացիոն ձվի, մսոսկրային ալյուրի, կերերի, լրացակերերի, բացառությամբ սինթետիկ և քիմիական նյութեր պարունակող լրացակերերի, պոլիմերային և ստվարաթղթե պալարային տուփերի և միջադիրների ներմուծումը ժամանակավորապես արգելելու մասին» թիվ 176-Ա հրամանի 1-ին կետը «բոլոր տեսակի թռչնամթերքի» բառերից հետո լրացնել «հումքի (փետուր, աղվամազ)» բառերով:

3. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի օգոստոսի 22-ի «Իտալիայի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք կենդանի թռչնի, բոլոր տեսակի թռչնամթերքի, ապրանքային և ինկուբացիոն ձվի, մսոսկրային ալյուրի, կերերի, լրացակերերի, բացառությամբ սինթետիկ և քիմիական նյութեր պարունակող լրացակերերի, պոլիմերային և ստվարաթղթե պալարային տուփերի և միջադիրների ներմուծումը ժամանակավորապես արգելելու մասին» թիվ 468-Ա հրամանի 1-ին կետը «բոլոր տեսակի թռչնամթերքի» բառերից հետո լրացնել «հումքի (փետուր, աղվամազ)» բառերով:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ